

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

2001-2002 տարեշրջանի աւարտին, ահա լոյս կը տեսնէ «Մաշտոցի Արձագանգ» պարբերաթերթին իններորդ տարուան թիւը:

Անցեալ տարիներուն պէս, այս տարի եւս պարբերաթերթը կ'ամփոփէ մեր դպրոցին կեանքն ու գործունէութիւնը. կը հանդիսանայ իբր տեղեկատու մեր առօրեային եւ աշխատանքներուն ու արդիւնքն է հաւատաւոր կամաւոր աշխատակիցներու, որոնք քաջատեղեակ են կիրակնօրեայ դպրոցին անհրաժեշտութեան ու իրենց սիրայօժար մասնակցութիւնը կը բերեն մեր աշխատանքներու յաջող իրագործման:

Իր տեղեկատուական եւ այլ յօդուածներու կողքին, «Մաշտոցի Արձագանգ» պարբերաթերթը այս տարի կը պարունակէ մանկապատանեկան ինչպէս նաեւ ամառնային աշխատանքներու յատուկ էջեր: Մեր նպատակն է այդ էջերու միջոցաւ առիթ ընծայել որ ծնողք եւ աշակերտ, շաբաթական հերթականութեամբ ու կանոնաւորութեամբ, Աւետարան ընթերցեն եւ այդ ընթերցանութենէն մեկնելով խօսակցութիւն եւ հաղորդակցութիւն յառաջացնեն իրենց հոգեւոր կեանքին մասին: Վերջ ի վերջոյ, հաւատացեալ չափահասներու օրինակը հետեւելով է որ մեր երեխաները եւ պատանիները իրենք ե՛ւս պիտի դառնան հաւատացեալ եւ եկեղեցասէր:

Ամառնային արձակուրդը կիրակնօրեայ դպրոց յաճախելէն դադար մըն է: Սակայն վստահ ենք որ մեր աշակերտները արձակուրդ պիտի առնեն ֆիզիքապէս դպրոց ներկայանալէն միայն եւ ո՛չ եկեղեցիէն, աղօթքէն ու բարերար գործէն: Պիտի շարունակեն իրենց Աստուածաձախ եւ քրիստոնեայի վայել սովորութիւնները որոնց վարժ են շնորհիւ իրենց ընտանեկան եւ կիրակնօրեայ դպրոցի դաստիարակութեան՝ սպասելով յաջորդ տարեշրջանի վերամուտը:

ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ

Թ. տարի

2001-2002

Խմբագրական	1
Բովանդակություն	2
Սրտի Խօսք - Տէր Գառնիկ Քհնյ. Գոյունեան	3
Տնօրէնութեան եւ ուսուցիչներու խօսք	4
2001-2002 Տեղեկատու	6
Կիրակնօրեայ դպրոցներու ուսուցչական կազմի սեմինար	10
Մի՛ պատրաստեր ապագան երեխայիդ համար, այլ երեխադ պատրաստէ ի՛ր ապագային համար	12
Հայ երիտասարդաց միջ-թեմական համագումար	14
Մանուկներու բարոյական դաստիարակութեան մասին	18
Սամուէլի պատմութիւնը եւ բառարան	20
Ընտրուած աղօթքներ մանուկներու համար	30
Կրօնական հանելուկներ	32
Կրօնական խաչբառ	33
Այբուբեն ու բանալի բառեր	34
Ծնողք աշակերտ կիրակնօրեայ ժամ	35

Մրտի խօսք

Սիրելի տնօրէնութիւն, ուսուցչական կազմ, ծնողներ եւ աշակերտներ,

Ահաւասիկ Ս. Գրքի եւ մեր հայրերուն շունչով տարեշրջան մը եւս բոլորեցիք:

Կիրակնօրեան մեր կրթական կեանքին մէջ ունի ուրոյն տեղ եւ արժէք: Այն փոքրիկը որ Կիրակնօրեայէն կ'անցնի, իր ամբողջ կեանքի ընթացքին հոգիին մէջ կը բնակեցնէ Աստուածաշունչի իմաստալից դրուագներուն եւ մեր հայրերու աղօթքներուն ճառագայթները:

Կիրակնօրեային մէջ աշակերտողը չի կրնար անտարբեր ըլլալ այն շնորհներուն, որոնք այնտեղ իրեն կը տրուին համբերութեամբ եւ սիրով:

Ինչպէս անցեալին ուրիշներու, այսօր ալ մեր կեանքը շրջապատուած է բարիքի ծառայող եւ չարիքի ծառայող երեւոյթներով: Չարիքի ծառայող երեւոյթները աւելի շատ են, ինչպէս միշտ եղած են, որովհետեւ մարդը աւելի հակամէտ է չարիքի, անհկա դիւրին կու գայ իրեն եւ հաճելի: Որպէսզի մարդը կարենայ պատրաստուիլ չարիքի թագաւորութեան դէմ մարտնչելու՝ հոգի եւ միտք կրթող օճախներու պէտք ունի: Մեզի պարգեւուած Աստուծոյ շնորհքն է մեր Կիրակնօրեան, զայն աչքի բիբի պէս պահենք, որ ան իր յարաճուն աշխուժութեամբ շարունակէ մեր փոքրիկներուն հոգիները կրթել՝ բարին եւ չարը զանազանելու եւ բարիին մշակ դառնալու համար:

Աղօթարար՝
Գառնիկ Բհնյ. Գոյունեան
ՀՈԳԵԻՈՐ ՀՈՎԻԻ
ՀԱՅՑ. ԱՌԱԲ. Ս. ՅԱԿՈԲ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Մեր խօսքը

Փառք կու տանք Աստուծոյ, որ այս տարի եւս, հակառակ զանազան դժուարութիւններու, մենք կրցանք Կիրակնօրեայ Դպրոց ունենալ եւ աւարտել մեր 22րդ տարեշրջանը:

Մեր 2001 – 2002 Տարեշրջանը սկսաւ 11 Սեպտեմբեր 2001 ի յաջորդող Կիրակին: Թուական մը որ կը ստիպէ իւրաքանչիւրիս վերարժեւորել մեր յոյսի աղբիւրը: Մենք որո՞ւ եւ ինչի՞ վրայ կը դնենք մեր յոյսը:

«Ինչո՞ւ այդպէս վախկոտ էք. տակաւի՞ն հաւատք չունիք:»

Յիսուսի հարցումն էր աշակերտներուն իբր պատասխան անոնց վախին երբ ծովը փոթորկեցաւ: Այս վիճակը շատ տարբեր չէ մեր առօրեայէն, ուր ամէնօրեայ լուրերը կը խօսին պատերազմներու, արհաւիրքի եւ անորոշութեան մասին ու կը փոթորկեցնեն մեր հոգիները: Մենք՝ ալեկոծ ծովու մը մէջ նաւու մը կը նմանինք եւ կ'ուզենք մեր նաւը ապահով կերպով նաւահանգիստ մը հասցնել: Սակայն ո՞ր է այս նաւահանգիստը ուր ապահովութիւն կայ եւ հոգեկան հանգստութիւն:

Նիւթական թէ հոգեւոր ապահովութիւն

Մարդիկ յաճախ իրենց յոյսերը կը դնեն նիւթական ապահովութեան վրայ եւ ամբողջ կեանք մը կ'անցնեն իրենց սիրելիներուն նիւթականը ապահովելով մոռնալով կամ երկրորդական կարգի դասելով հոգեկան ապահովութիւնը: Մեզմէ շատեր իրենց զաւակներուն նիւթական ապագան կերտելով կը բաւարարուին: Չեն մտածեր թէ իրենց զաւակները պէտք է պատրաստեն հոգեւոր ապագային, ապահովեն իրենց հոգեւոր ապագան, նիւթականին կողքին հաւասարապէս:

«Անոնց սորվեցուցէ՛ք այն բոլոր պատուիրանները որ ես ձեզի տուի»

Մատթեոսի Աւետարանին վերջին համարին մէջ Յիսուս իր պատգամը կու տայ առաքեալներուն «Անոնց սորվեցուցէ՛ք այն բոլոր պատուիրանները որ ես ձեզի տուի. եւ ահա միշտ ձեզի հետ պիտի ըլլամ, մինչեւ աշխարհիս վախճանը»:

Քրիստոսի պատգամն ու իր պատուիրաններուն դաստիարակութիւնը աճեցան ու ուճացան մինչեւ 19րդ դար. նահանջի սկսան մասնաւորաբար 20րդ դարու կէսէն ետք եւ դժբախտաբար կը շարունակուի մինչեւ այսօր: Մարդիկ այսօր հեռու են Յիսուսի պատգամին գործադրութենէն որովհետեւ աւելի քիչ կը հետաքրքրուին սորվելով եւ սորվեցնելով: Առօրեայ զանազան զբաղումներն ու ճոխութիւնները մեզի հեռացուցած են Քրիստոսի պարզ ու օրինակելի կեանքէն:

Կիրակնօրեայ Դպրոցի Դաստիարակ-Ուսուցիչին դերը

Կիրակնօրեայ դպրոցին մէջ մենք մեր փոքր ու համեստ կարողութիւններով կը փորձենք հաւատարիմ մնալ Քրիստոսի վերջին պատգամին՝ փոխանցելով, կազմաւորելով ու կերտելով մեզի վստահուած աշակերտներուն հոգեւոր ապագան: Սակայն անկեղծօրէն յայտարարենք թէ «հունձքը շատ է եւ մշակները քիչ»: Մենք անհրաժեշտ կարիքը ունինք Քրիստոսի եւ Եկեղեցոյ ճշմարտութեամբ զինուած Դաստիարակ-Ուսուցիչներու: Երբ մեր երիտասարդները հեռու կը պահենք մեր Եկեղեցիէն, դժուար է բաւարար դաստիարակ-ուսուցիչներ ունենալ: Եկէք մենք բոլորս, որպէս հաւատացեալ ժողովուրդ թէ եկեղեցի, պարտինք մեր յաջողութիւնները եւս չափել Քրիստոնէական Դաստիարակութեան մէջ, մեր բաժինը բերելով սիրայօժար ու կամաւոր աշխատանքներով, ըլլայ այդ մասնակի թէ ամբողջական: Աստուածահաճոյ այս գործին մէջ եւ մեր կեանքին մէջ մասնաւորապէս, գիտնանք զանազանել կենսականը կարելորէն ու տանք առաջնահերթութիւնը ԿԵՆՍԱԿԱՆԻՆ:

Տնօրէնութիւն եւ Ուսուցչական Կազմ

Հակիրճ տեղեկություններ

2001-2002 տարեշրջանի մասին

Սուրբ Յակոբ Մայր Եկեղեցույ Կիրակնօրեայ Դպրոցս կը վայելէ Մայր Եկեղեցույս Հոգաբարձութեան հովանաւորութիւնը: Հոգաբարձութեան ներկայացուցիչն է Պրն. Մովսէս Քէօսէեան:

ՏԵՍՉՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄ

2001-2002 տարեշրջանին տեսչութեան պաշտօնը ստանձնեց Պր. Թորոս Պապիկեան: Դպրոցս կը պաշտօնավարեն հետեւեալ ուսուցիչ-ուսուցչուհիները.

Լիաժամ

Վերա	Կարապետեան	Մանկապարտէզի դաստիարակ:	Բ.	կարգի
Անի	Գըլնճեան	Մանկապարտէզի դաստիարակ: Եւ փոքրերու լսարանային բաժնի երգի դասատու:	Գ.	կարգի
Երան	Լոշխաճեան	Նախակրթարանի դաստիարակ:	Ա.	կարգի
Յասմիկ	Նաճարեան	Նախակրթարանի դաստիարակ:	Բ. եւ Գ.	կարգերու
Յասմիկ	Գանաճեան	Նախակրթարանի դաստիարակ:	Դ. եւ Ե.	կարգի
Շողիկ	Նաճարեան	Նախակրթարանի դաստիարակ:	Զ. եւ Է.	կարգի
Թորոս	Պապիկեան	Նախակրթարանի դաստիարակ:	Ը.	կարգի


Մասնաժամ Օգնականներ

Անի	Խըշիշեան	Մանկապարտէզի	Ա.	կարգի
Անի	Պապիկեան	Մանկապարտէզի	Ա.	կարգի
Ներսէս	Հատիտեան	Նախակրթարանի	Դ.	կարգի


Կազմս գումարեց ժողովներ որոնց ընթացքին արծարծուեցան ծրագրային, կարգապահական, արտադասարանային աշխատանքներու վերաբերող եւ այլ ճիւղեր:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՎԻՃԱԿ

2001-2002 տարեշրջանին արձանագրուած աշակերտութեան թիւը 93 է, իսկ շաբաթական ներկայութեան միջինն է 60 աշակերտ, բաժնուած 8 դասարաններու (երկրորդ-երրորդ, չորրորդ-հինգերորդ եւ վեցերորդ-եօթերորդ դասարանները ունեցան միացեալ դասարան):



Դասարանային արձանագրութիւն եւ միջին ներկայութիւն



Աշակերտութեան ներկայութիւն իւրաքանչիւր Կիրակի

ԴՊՐՈՑԻՆ ԱՌՕՐԵԱՆ

2001-2002 տարեշրջանին կիրակնօրեայ դպրոցի առօրեայ յայտագիրը կ'ընթանայ Հայաստանեայց Եկեղեցույ Կիրակնօրեայ դպրոցներու դասաւանդական հիմնական կառուցուածքին համաձայն՝ լսարանային եւ դասարանային բաժանումներով, ուր կը դասաւանդուին Ս. գրական, ծիսական, բարոյագիտական եւ գործնական ծանօթութիւններ, գիտելիքներ եւ աղօթքներ:

Լսարանային բաժին

Տէրունական աղօթքի, մաղթանքի եւ Կիրակնօրեայ Մաղթերգէն ետք, աշակերտները կը բաժնուին 3 խումբերու:

- Մանկապարտէզի Ա. Բ. եւ Գ. դասարաններ
- Նախակրթարանի Ա. Բ. եւ Գ. դասարաններ
- Նախակրթարանի Դ. Ե. Զ. Է եւ Ը. դասարաններ

Պահը կ'ընթանայ հետեւեալ ձեւով՝

- Ոսկեղէն համարներու կամ Սաղմոսի ուսուցում:
- Բարոյալից պատմուածքներու պատմութիւն:
- Կրօնական երգերու եւ շարականներու ուսուցում:
- Աւետարանի ընթերցում եւ մեկնաբանութիւն:

Դասարանային բաժին

Կը դասաւանդուի ըստ դասագիրքերու:

**ՋԵՌԻՆԱՐԿՆԵՐ ԵՒ ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԱԾԽԱՏԱՆՔՆԵՐ
ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՐՔՈՎ**

9 Սեպտեմբեր 2001 Արձանագրութիւն:

16 Սեպտեմբեր 2001 Տարեսկիզբ եւ վերամուտ:

23 Սեպտեմբեր 2001 Վարժարանի աշակերտութիւնը մասնակցեցաւ Սուրբ Պատարագի խորհուրդին եւ հաղորդուեցաւ:

- 22 Հոկտեմբեր 2001 Թարգմանչաց տօնի յատուկ յայտագիր լսարանային բաժնի:
- 16 Դեկտեմբեր 2001 Դպրոցի աշակերտութիւնը իր մասնակցութիւնը բերաւ Սուրբ Յակոբի տօնակատարութեան գեղարուեստական յայտագրին:
- 30 Դեկտեմբեր 2001 Ամանորի եւ Ս. Ծննդեան զոյգ տօներու հանդիսութիւն, ուր տեղի ունեցաւ աշակերտներուն պատրաստած գեղարուեստական ելոյթը: Հանդիսութիւնը վերջ գտաւ հիւրասիրութեամբ եւ նուէրներու բաշխումով:
- 6 Յունուար 2002 Դպրոցս փակ էր Ս. Ծնունդի առթիւ:
- 10 Փետրուար 2002 Վարդանանց եւ Բարեկենդան տօներու յատուկ տօնակատարութիւն:
- 17 Մարտ 2002 Դպրոցի բարձր կարգի աշակերտները ներկայ գտնուեցան եկեղեցոյ Ս. Պատարագին:
- 24 Մարտ 2002 Դպրոցս փակ էր Ծաղկազարդի առթիւ:
- 31 Մարտ 2002 Ս. Զատիկուայ յատուկ նշում:
- 7 Ապրիլ 2002 Մանկապարտէզի աշակերտները ներկայ գտնուեցան Ս. Պատարագի:
- 9 Յունիս 2002 Ամապերջի հանդէս:

Կիրակնօրեայ դպրոցներու ուսուցչական կազմի սեմինար

Գանատայի առաջնորդական փոխանորդութեան քրիստոնէական դաստիարակութեան յանձնախումբը կազմակերպեց սեմինար մը Մոնթրէալի եւ Լաւալի Կիրակնօրեայ դպրոցներու ուսուցիչներուն համար 31 Օգոստոս-1 Սեպտեմբեր 2001-ին:

Սեմինարի բացումը կատարեց Տէր Գառնիկ Քահանայ Գոյունեան Ուրբաթ 31 Օգոստոս 2001-ի երեկոյեան ժամը 7-ին: Սեմինարին կը մասնակցէին 17 ուսուցիչ – ուսուցչուհիներ:

Դասախօսական շարքի առաջին նիւթն էր Ինչպէ՞ս սիրցնել եւ սորվեցնել մեր շարականները, դասախօս՝ Տէր Գառնիկ քահանայ Գոյունեան: Տէր հայրը շարականներու սահմանումը տալէ ետք մէջքերումներ ըրաւ շարականի նկատմամբ մեր հայրերու սահմանումներէն, ապա անդրադարձաւ անոնց կարեւորութեան մասին Հայաստանեաց Առաքելական եկեղեցիներէն ներս: Տէր Հայրը սահմանեց նաեւ շարականներու դասաւանդութեան անհրաժեշտութիւն Կիրակնօրեայ Դպրոցներու աշակերտներու դասաւանդութեան, ան հաստատելով թէ աշակերտներուն հաճելի դարձնելու համար շարականները, անհրաժեշտ է շարականներու եւ սաղմոսներու լաւ ընտրութիւնը: Մանուկներու մտայնութեան աւելի յարմար են եռանդուն եւ հասկնալի շարականները քան դժուարին եւ դանդաղ եղանակներ ունեցող շարականներու: Դասախօսութեան ամառին Տէր Հայրը պատասխանեց ուսուցիչները մտահոգող հարցումներուն:

Կարճ դադարէ մը ետք Պր. Թորոս Պապիկեան դասախօսեց Աստուածաշունչի պարունակութեան մասին: Դասախօսը յստակօրէն բացատրեց Աստուածաշունչի մասերը, խօսեցաւ հին եւ նոր

կտակարաններու պարունակութեան մասին: Ան յաճնարարեց Նոր կտակարանի աշխարհաբարի Մեծի Տանն Կիլիկիոյ պատրաստած տպագրութիւնը, ուր յստակ եւ հասկնալի են Առաքելոց գործերն ու նամակները. ան նշեց նաեւ յիշեալ տպագրութեան աւարտին գտնուող նիւթերու ցանկը, զորս կը դիւրացնէ Աւետարանի ընթերցանութիւնը: Դասախօսութեան աւարտին առիթ տրուեցաւ հարցումներու:

Շաբաթ 1 Սեպտեմբեր, 2001-ին առաւօտեան ժամը 10-ին Սեմինարը շարունակուեցաւ Դասախօսութեան շարքով: Տիկին Պայծառ Աւետիքեան դասախօսեց հայաստանեաց Առաքելական Եկեղեցւոյ Տօներու մասին: Դասախօսը պատշաճ եւ հակիրճ տեղեկութիւններ տալէ ետք տօներու մասին, յատկապէս նշեց Առաքելական Եկեղեցւոյ Տաղաւարները: Ան յիշեց նաեւ թէ ինչպէ՞ս հայ ժողովուրդը իր հեթանոսական սովորութիւնները եւ աւանդութիւնները ներմուծած է Քրիստոնէական տօներուն: Հակառակ արտագին բոլոր դժուարութիւններուն, այսօր հայ ժողովուրդը կը փորձէ ամուր կառչիլ իր արմատներուն, պապենական աւանդութիւններուն, սովորութիւններուն եւ հետեւիլ Հայաստանեաց Առաքելական եկեղեցւոյ տօներուն:

Դասախօսութիւններուն չորրորդ նիւթն էր Մանուկներու հոգեւոր կեանքը, դասախօս՝ Ծաղիկ Պոյաճեան որ աշխատածամ մը կազմակերպեց «Ինչպէ՞ս խօսիլ Աստուծոյ մասին երեխաներուն հետ» նիւթին շուրջ:

Սեմինարի աւարտին ներկաները պատրաստուած նոր պաշարներով, իրարու յաջողութիւն մաղթելով վերամուտի եւ 2001-2002 տարեշրջանի հասցէին, հրաժեշտ առին նման սեմինարներ յաճախ կրկնուելու ակնկալութեամբ:

Մի՛ պատրաստեր ապագան երեխայիդ համար, այլ երեխադ պատրաստէ ի՛ր ապագային համար

Այս նախադասութիւնը ուշադրութիւնս գրաւեց երբ ընթերցանութիւնը կը կատարէի Գրիգոր Վրդ. Չիֆթճեանի «Ներկայ աշխարհը իր բարոյական հարցերով» գիրքին:

Մարդուս անցեալը, ներկան եւ ապագան անխուսաբելիօրէն իրենց ներդրումը եւ ազդեցութիւնը կ'ունենան անոր ընթացիկ եւ աւօրեայ կեանքէն ներս: Անցեալը, իր յիշատակներով, փորձառութիւններով եւ դասերով կու գայ ուղղութիւն տալու մարդուն որ իր ներկայ ուղին գծէ: Ներկան մարդուս աւօրեան է, ամենօրեայ ուրախութիւններն ու հոգերը, ընկերային, հոգետոր, ընտանեկան եւ գործի վերաբերող դիպուածները: Իսկ ապագան, այդ մեծ հարցման նշանը, զորս մարդը կը փորձէ առաւելագոյն ձեւով հասկնալ, նախատեսել, ծրագրել եւ իշխել:

Ներկայ ընկերութեան ընդհանուր ուղղեցոյցն է որ անհատը ապագային հաշույն կատարէ խնայողութիւններ, ստորագրէ ապահովագրութիւններ եւ ամբարէ նիւթական թռչակներ: Նոյնպէս նաեւ մեր զաւակներու համար, մենք մէկ կողմ կը դնենք ուսումի յատկացուելիք գումարներ եւ անոնց ապագան կարելի եղածին չափ պատրաստելու համար, զանազան տեսակի դրամական խնայողութիւններ կը կատարենք:

Այս բոլորը յօդուածիս վերնագրին առաջին շերտին կը վերաբերին, երեխային ապագան կը պատրաստեն: Անոնք նիւթակա՛ն

միայն ապահովություն կը միտեն բերել մեր երեխաներուն: Իսկ ո՞ր մնաց մեր երեխաներուն հոգեկան, հոգեւոր ապագային պատրաստութիւնը:

Ահա հոս է որ վերնագիրը կ'ամբողջանայ «երեխադ պատրաստէ ի՛ր ապագային համար» խօսքով: Իբր ծնողք, նոյնքան, եթէ ոչ աւելի՛ օգտակար ժառանգ մը ձգած կ'ըլլանք մեր զաւակներուն եթէ արդէ՛ն իսկ զանոնք հոգեպէս պատրաստենք ապագան ընդունելու եւ անոր ներկայացուցած մարտահրաւերները դիմագրաւելու:

Իսկ ինչպէ՞ս կը կիրարկուի այս: Ինծի այնպէս կը թուի որ եթէ մենք, ծնողներս, մեր զաւակներուն սորվեցնենք, հաւատալ, յուսալ եւ սիրել, իմաստութիւն, հոգեւոր հասունութիւն եւ հոգեկան ոյժ ժառանգ ձգած կ'ըլլանք իրենց ու այսպէսով, զիրենք պատրաստած դիմագրաւելու որեւէ դժուարութիւն զորս մեր կուտակած գումարները անկարող կ'ըլլան յարդել: Այսպէս օրինակ, ի՞նչ օգուտ պիտի ունենայ մեր զաւակին ժառանգ ձգուած դրամը անոր յուսալքութեան կամ յուսախաբութեան մէկ վայրկեանին:

Հաւատալ յաջողութեան, հաւատալ Աստուծոյ, հաւատալ կեանքի բարիքներուն: Յուսալ որ անձրեւէն վերջ արելը ուշ կամ կանուխ կը ծագի, յուսալ որ, ըստ կեանքի հաւասարակշռութեան օրէնքին լաւն ու վատը զիրար կը յաջորդեն: Սիրել կեանքը, սիրել մեր ընտանիքը, մեր շրջապատը: Առանց ուռանալու նիւթական ապահովութեան մասնակի կարեւորութիւնը, ահա մի քանի հոգեւոր հարստութիւններ որոնք կարելի է փոխանձել մեր զաւակներուն, առ ի նախապատրաստութիւն ապագայի անակնկալներուն դիմաց:

Հայ երիտասարդաց միջ-թեմական համագումար

Ծանօթ : Այս տարի Ապրիլ 2002 ին Տէր Զօրի մէջ տեղի ունեցաւ հայ երիտասարդներու համագումար: Այս համագումարին մասնակցեցաւ նաեւ մեր բազմավաստակ ուսուցչուհիներէն օրդ. Յասմիկ Նաճարեանը: Ստորեւ իր տեղեկագիրը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի հովանաւորութեամբ՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կազմակերպութեամբ 20-24 Ապրիլ 2002-ին Տէր Զօրի մէջ տեղի ունեցաւ հայ երիտասարդներու համագումարը: Իր տեսակին մէջ իւրայատուկ համագումարին մասնակցած էին 100-ի մօտ երիտասարդ-երիտասարդուհիներ եկած Լիբանանէն, Սուրիայէն, Ամերիկայի Միացիալ Նահանգներէն, Գանատայէն, Յունաստանէն եւ Նոր Զուլայէն:

Հայ երիտասարդութեան բոլոր խաւերէն եւ հոգեւոր ու ընկերային տարբեր պատրաստութիւն ունեցող անձերէ բաղկացած այս համագումարին հիմնական նպատակն էր լսել երիտասարդութեան ձայնը, ու անոնց տեսանկիւնէն դիտել Հայաստանեաց եկեղեցին ու ազգային կեանքը իր բոլոր երեսներով ու տազնապներով՝ եկեղեցական ու հոգեւոր, կրթական ու դաստիարակչական, բարոյական ու ընկերային:

Ծաբաթ 20 Ապրիլ, 2002-ին փոխադրակառքերը մեկնելով Հալէպէն ժամանեցին Տէր Զօրի Սրբոց Նահատակաց Յուշարձան Համալիր, ուր պիտի ունենային համագումարի զրոյցները ու նիստերը: Համալիրին կարճ այցելութիւնէ ետք ներկաները նիստ մը ունեցան, բաժնուած յանձնախումբերու: Ապա մեկնելով պանդոկ երիտասարդները տեղաւորուեցան սենեակներու մէջ: Ընթրիքէն ետք ընկերային հաւաքոյթին Տէր Զօր ժամանած երիտասարդներուն բարի գալստեան խօսք ուղղեց Նարեկ Ծ. վրդ. Ալեւմէզեան՝ ընդգծելով Տէր Զօրեան հաւաքի խորհրդանշական իմաստը, ինչպէս նաեւ Մեծի

Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա. Վեհափառ Հայրապետի կողմէ երիտարարութեան տրուած կարեւորութիւնը: Խաղի մը ընթացքին ներկաները ծանօթացան իրարու: Համագումարի պաշտօնական բացումը տեղի պիտի ունենար Կիրակի 21 Ապրիլի 2002-ին:

Կիրակի 21 Ապրիլ 2002: Առաւօտեան երիտասարդները մասնակցեցան Ս. եւ Անհան պատարագի արարողութեան Սուրբ Նահատակաց Մատրան մէջ: Կէսօրէ ետք ժամը 3:00-ին Համագումարը բացուեցաւ, ուր բացման աղօթքէն ետք Ն.Ս.Օ. Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի ողջոյնի գիրը կարդաց Վրոյր վրդ. Տէմիրճեան:

Համագումարի առաջին նիստի նիւթն էր կլոր սեղանի շուրջ «Եկեղեցին եւ արհեստագիտութիւնը», զրուցավար Գեղարդ Աբղ. Քիւսպէկեան. հանդէս եկան նաեւ 4 մասնակիցներ, ապա առիթ տրուեցաւ ներկաներուն յայտնելու իրենց կարծիքները:

Երեկոյեան, Նահատակաց Մատրան մէջ տեղի ունեցաւ ժամերգութիւն, որմէ ետք կարդացուեցաւ Ս. Գրային հատուածը եւ մեկնաբանուեցաւ:

Յետմիջօրէին, ժամը 6-ին սկսաւ երկրորդ նիստը, «Եկեղեցին եւ բարոյական հարցեր» նիւթով դասախօսութեամբ: Դասախօսն էր Գրիգոր վրդ. Չիֆթճեան հարցադրումներու ճամբով եղան կարծիքներու փոխանակում: Դասախօսութեան աւարտին մասնակիցները հինգ խումբերու բաժնուելով քննարկեցին արծարծուած հարցերը: Երեկոյեան տեղի ունեցաւ ընկերային հաւաքոյթ:

Երկուշաբթի, 22 Ապրիլ, 2002-ի առաւօտուն, հաւաքաբար այցելութիւն տրուեցաւ Տէր Զօրէն ժամ մը հեռաւորութեան վրայ

գտնուող Մարկատէի շրջանը, ուր Սուրբ Յարութիւն մատրան մէջ տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն, որու աւարտին Բերիոյ Թեմի Առաջնորդ Սուրէն Արք. Գաթարոյեան խրախուսեց ներկաները եւ յիշեց, թէ անապատին մէջ կառուցուած այս մատուրը ամէնէն նոր սրբավայրն է մեր ժողովուրդին:

Համագումարի երրորդ նիստը «Եկեղեցւոյ ազգային, մշակութային եւ ընկերային դերակատարութիւնը» կլոր սեղանի զրուցավարն էր Տիկ. Սօսի Փալանճեան, ուր խօսուեցաւ մեր եկեղեցւոյ դարաւոր առաքելութեան մասին, որ երբեմն արտաքին ազդեցութեանց ճամբով կասեցուած է: Ընկերային կեանքին մէջ աւելի առոյգ ներկայութեան եւ այժմէական գործունէութեան առաջարկներ կատարուեցան:

Երեկոյեան տեղի ունեցաւ ընկերային հաւաքոյթ եւ գեղարուեստական յայտագիր, որու ընթացքին ներկայ երիտասարդներէն տաղանդաւորներ նուագով, երգով ու ասմունքով զուարթացուցին երեկոն:

Երեքշաբթի, 23 Ապրիլ, 2002-ի առաւօտեան տեղի ունեցաւ ժամերգութիւն եւ աստուածաշնչական հատուածի ընթերցում ու մեկնաբանում:

Ժամը 9-ին «Եկեղեցին եւ Հոգեւոր Ծարժումները» դասախօսութեամբ հանդէս եկան Նիկոլ եւ Ռուզան Սալխանեան, որուն աւարտին դասախօսները պատասխանեցին ներկաներու լուսաբանական եւ մտահոգութիւններէ բխող հարցերուն: Որմէ ետք ներկաները հինգ խումբերու բաժնուելով քննարկեցին եւ իրենց կարծիքները տուին նիւթին շուրջ, եւ իրենց զեկույցները ընթերցեցին: Ծաշէն ետք ներկաները շրջապտոյտ մը կատարեցին Եփրատի ափերուն:

Կէսօրէ ետք ներկաները անգամ մը եւս հաւաքուեցան զրուցելու «Հայ Երիտասարդը ի՞նչ կը սպասէ Հայ Եկեղեցիէն», նիւթի շուրջ զրուցավար՝ Գրիգոր Ալլոզեան, մասնակից ունենանալով զանազան վայրերէ եկած երիտասարդները: Եղաւ կարծիքներու փոխանակում եւ երիտասարդներ արտայայտուեցան առողջ կարծիքներով, բարելաւելու համար հայ ժողովուրդի վիճակը եւ հետաքրքրութիւն առթնցնելու Եկեղեցույ ուղղութեամբ:

Երեկոյեան ընկերային հաւաքոյթը փոխարինուած էր խմբակներու խորհրդակցութեամբ ուր երիտասարդներ բոլորուեցան կղերական հայրերու շուրջ , անոնց ներկայացնելով իրենց մտահոգութիւնները եւ ստանալով պատասխաններ:

Չորեքշաբթի, 24 Ապրիլ, 2002-ին Համագումարի անդամները մասնակցեցան Սրբոց Նահատակաց Յուշարձան-Մատրան մէջ Սուրբ եւ անմահ պատարագին՝ կատարողութեամբ Գերշ. Տ. Սուրէն Արք. Գաթարոյեանի: Ապա քաղաքի արաբական Մշակութային Կեդրոնին մէջ՝ կազմակերպութեամբ Բերիոյ Թեմի Ազգային Իշխանութեան, հայ ժողովուրդի երախտագիտութիւնը փոխանցուեցաւ այն արաբ աշիրաթներուն, որոնք Մեծ Եղեռնի օրերուն փրկած էին իրեց սահմանները հասաց հայորդիները:

Ճաշէն ետք ներկաները բաժնուեցան դարձեալ տեսնուելու յոյսով, նոյնանման համագումարներու առիթով: Սոյն համագումարը իրայատուկ էր իր տեսակին մէջ, փափաքելի է որ դառնայ սովորութիւն եւ հերթականութեամբ կատարուին նման համագումարներ:

Մանուկներու բարոյական դաստիարակութեան մասին

Ծնողքի մեր կարեւոր պարտականութիւններէն մէկն է ապահովել մեր զաւակներուն նկարագրի բարոյական կազմաւորումը: Իւրաքանչիւր ընտանիք ունի իրեն յատուկ արժէքներ որոնց հիման վրայ կը կողմնորոշուին հոն կիրարկուող դաստիարակութեան ոճն ու սկզբունքները: Սակայն կան արժէքներ, որոնք անխուսափելիօրէն պէտք է գտնուին ամէն երեխայի մօտ, անկախ ընտանիքին ընկերային, կրօնական եւ հոգեւոր հակումներէն: Այս արժէքներն են բարոյական արժէքները, ինչպէս անկեղծութիւնը, ընկերասիրութիւնը, հաւատքը, յարգանքը, վստահութիւնը, պատասխանատուութիւնը:

Դաստիարակութեան ոճերը ընտանիքէ ընտանիք շատ տարբերելով, անկարելի է ստեղծել բարոյական կազմաւորման ուղղեցոյց մը որ պատշաճի բոլորին նոյն ատեն: Սակայն կարելի է վեր առնել որոշ ընդհանրութիւններ, որոնք բոլոր ծնողներուն համար օգտակար կրնան ըլլալ իրենց զաւակներու բարոյական դաստիարակման աշխատանքէն ներս:

Մի՛ սպասեր որ երեխադ տարիքը առնէ որ ապա՛ միայն խօսիս բարոյականութեան մասին: Փոքր տարիքէն երեխան կրնայ ներողութիւն խնդրել, շնորհակալութիւն յայտնել եւ խնդրել բան մը ունենալէ առաջ: Փոքր տարիքէն երեխան կրնայ հասկնալ թէ ինչո՞ւ մէկուսացած եւ առանցնացած ընկերոջ մը օգնութիւն հասցնելը գովելի է եւ ցանկալի:

Վարդ մը ծնողներ կը կարծեն թէ ո՛չ մէկ յանգամանք ունին զտելու եւ սահմանափակելու իրենց զաւակներուն ժամանցներն ու առօրեայ զբաղումները: Այդ սխալ է: Ընդհակառակը: Մօտէն հետեւէ զաւկիդ ժամանցներուն. Ի՞նչ կը դիտէ, Ի՞նչ կը կարդայ, Ի՞նչ խաղեր կը խաղայ, որո՞ւ հետ եւ ո՞ւր: Վստահ եղիր որ զաւակդ ընտիրին միայն կը հանդիպի ու ընտիրէն միայն օրինակելի դասեր կը քաղէ:

Ժամանակ տրամադրէ՛ զաւկիդ բացատրելու թէ ինչո՞ւ որոշ որոշումներ կ'առնես ու կը պահանջես որ անոնց երթարկուի ան: Խուսաբի՛ր «որովհետեւ այդպէս կ'ըսեմ քեզի» դիրին պատասխանէն որովհետեւ ան ոչինչ կը սորվեցնէ զաւկիդ, ընդհակառակը կրնայ զինք դէմդ լարել: Ժամանակ տրամադրէ զաւկիդ արդարացնելու թէ ինչո՞ւ որոշ բաներ այս կամ այն յատուկ ձեւով պէտք է ընել:

Օրինակը դուն ի՛սկ տուր: Վարուիր զաւակիդ հետ այնպէս ինչպէս կ'ուզես որ ան վարուի ուրիշին հետ: Մի՛ ստեր, մի՛ խաբեր, մի՛ ծաղրեր կամ բանբասեր ուրիշը, մի՛ հայհոյեր, մի՛ ծխեր: Յարգանքով վարուիր կնոջդ կամ ամուսնոյդ հանդէպ ինչպէս նաեւ զաւակներուդ հանդէպ: Քու վարուելակերպէդ է որ զաւակդ օրինակ կ'առնէ ու քեզ «կապկելով» կը սորվի:

Ծարքը այսպէս կրնայ անվերջ երկարիլ: Ձեւերը շատ են, միջոցները անհամար: Սակայն մէկ բան յստակ է եւ անվիճելի, թէ բարոյական դաստիարակութիւնը անհրաժեշտ է եւ թէ մեր զաւակները անպայման պէտք է ունենան բարոյական նկարագիր, որովհետեւ մարդուս ճշմարիտ նկարագիրը կը յայտնուի իր վարուելակերպէն երբ ան առանձին է եւ երբ ո՛չ ոք զինք կը դիտէ:

ՍԱՄՈՒԷԼԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԶԱԻԱԿ ԱՆՆԱՅԻՆ ՀԱՄԱՐ

Երբ իսրայելացիները հաստատուեցան Քանանի երկրին մէջ, Տէրոջ ուխտի տապանակը քահանաներու հսկողութեան յանձնուեցաւ Սելով քաղաքին մէջ: Եղկանա անունով մարդ մը, որ Հերեմիէլի որդին էր, երկու կին ունէր: Անոնցմէ մէկուն անունը Աննա էր, երկրորդին՝ Փենանա: Փենանա որդիներ ունէր, իսկ Աննա զաւակ չէր ունենար: Ամէն տարի Եղկանա Սելով կ'երթար՝ ամենազօր Տէր Աստուծոյ տաճարը, անոր երկրպագելու եւ զոհ մատուցելու: Իւրաքանչիւր անգամ Եղկանա մատաղէն բաժին մը կու տար իր կնոջ՝ Փենանայի եւ անոր որդիներուն: Այդ անգամ ալ ան Փենանայի եւ անոր որդիներուն մէկ քանի բաժին տուաւ, իսկ Աննային՝ մէկ բաժին, որովհետեւ ան որդի չուներ: Եղկանա, սակայն, աւելի շատ կը սիրէր Աննան, քան՝ Փենանան: Ան կը տխրէր, որովհետեւ Աննա երեխայ չէր ունենար: Ամէն անգամ, երբ Տէրոջ տունը կու գային, Աննա կու լար եւ կը մերժէր հաց ուտել:

Ամուսինը կ'ըսէր անոր. «Ինչո՞ւ կու լաս, ինչո՞ւ չես ուտեր, եւ ինչո՞ւ հոգիդ կ'ալեկոծի, միթէ ես քեզի համար տասը որդիէ աւելի չե՞մ»:

Աննա կ'աղօթէր Տէրոջ, եւ կ'աղաչէր. «Իսրայէլի Տէր Աստուած, ամենազօր Տէր, կը խնդրեմ որ տեսնես քու աղախինիդ տառապանքները, յիշես զիս եւ արու զաւակ մը պարգեւես. ես կը խոստանամ մինչեւ իր մահուան օրը զայն քեզի նուիրուած պահել: Ան գինի պիտի չխմէ ու պիտի չհարբի, եւ անոր մազերը պիտի չկտրուին»:

Աննա անձայն կ'աղօթէր: Տէրը լսեց անոր ձայնը:

Հեղի քահանան, որ կը հետեւէր աղօթող կնոջ, կարծեց թէ Աննա հարբած է, որովհետեւ աղօթքի ատեն անոր շուրթերը կը շարժէին, բայց ձայնը չէր լսուեր:

Աննա ըսաւ Հեղիին. «Ես վշտացած սրտով կիմ եմ: Ոչ գինի խմած եմ եւ ոչ ալ հարբած եմ: Ես իմ սիրտս բացած եմ Տէրոջ առջեւ»:

Այն ժամանակ Հեղի ըսաւ. «Գնա՛ խաղաղութեամբ, Իսրայէլի Տէր Աստուածը քու խնդրանքդ թող կատարէ»: Աննա վերադարձաւ իր ամուսինին մօտ:

ՓՈՔՐԻԿ ՏՂԱՆ ԿԸ ԶԳԷ ՏՈՒՆԸ

Երբ Եղկանա եւ Աննա ու Փենանա տուն վերադարձան, Տէրը ողորմեցաւ Աննայի, եւ ան որդի մը ունեցաւ: Երեխային անունը Սամուէլ դրին:

Եղկանա՝ Աննայի ամուսինը, իր ամբողջ ընտանիքով յաջորդ տարի կրկին Սելով եկաւ՝ տարեկան իր զոհը մատուցելու: Աննա չգնաց անոր հետ, եւ ըսաւ իր ամուսինին. «Հոս մնամ մինչեւ մանուկը քիչ մըն ալ մեծնայ: Ես ետքը կը տանիմ զայն, որ ներկայանայ Տէրոջ, եւ ընդմիջտ ծառայէ այնտեղ»:

Ամուսինը համաձայնեցաւ: Կինը իր մանչուկին հետ մնաց տունը: Յաջորդ տարի ընտանիքով անոնք նորէն գացին Սելով՝ իրենց հետ առնելով երեք տարեկան եզ մը, կլոր հացեր, ալիւր եւ գինի: Անոնք գացին Տէրոջ տունը: Եղկանա եւ Աննա երենց որդին ընծայեցին Տէրոջ: Աննա մանուկը տարաւ Հեղիի մօտ, եւ ըսաւ. «Ես ահա այս մանուկին համար Տէրոջ կ'աղօթէի: Տէրը կատարեց իմ

խնդրանքս: Ես, իբրեւ փոխ հատուցում, որդիս կը նուիրեմ Տէրոջ, ան որքան որ ապրի, թող ծառայէ անոր»:

Անոնք երկրպագեցին Տէրոջ, երեխան ձգեցին տաճարին մէջ, եւ՝ վերադարձան: Մանուկ Սամուէլ Տէրոջ կը ծառայէր: Մայրը ամէն տարի կարճ վերարկու մը կը կարէր ու կը բերէր Սամուէլի՝ երբ ամուսինին հետ կը բարձրանար ամէն տարուան զոհը մատուցելու:

Հեղի, օրհնելով Եղկանան եւ անոր կինը, ըսաւ. «Տէրոջ քու նուիրած այս մանուկին փոխարէն Տէրը քեզի եւ Աննային նոր զաւակներ պարգեւէ»:

Այդպէս ալ եղաւ: Աննա ուրիշ զաւակներ ալ ունեցաւ, երեք մանչ եւ երկու աղջիկ:

«ԿԸ ԼՍԵՄ, ՏԷՐԸ»

Սամուէլ, Հեղի քահանային մօտ Տէրոջ կը ծառայէր: Օր մը, Հեղի երբ կը քնանար իր սենեակին մէջ, եւ աչքերը սկսած էին ծանրանալ, զգաց որ չէր տեսներ: Սամուէլ նոյնպէս կը քնանար Տէրոջ տաճարին մէջ, ուր կը գտնուէր Աստուծոյ տապանակը: Յանկարծ, Տէրը ձայն տուաւ Սամուէլի. «Սամուէ՛լ, Սամուէ՛լ»:

Սամուէլ վազեց Հեղիի մօտ, եւ ըսաւ. «Ես հոս եմ, ինչո՞ւ զիս կանչեցիր»: Հեղիի ըսաւ. «Ես քեզ չկանչեցի, վերադարձիր եւ քնացիր»:

Սամուէլ վերադարձաւ եւ քնացաւ:

Տէրը կրկին կանչեց. «Սամուէ՛լ, Սամուէ՛լ»: Սամուէլ երկրորդ անգամ զնաց Հեղիի մօտ, եւ ըսաւ. «Ես հո՛ւս եմ, ինչո՞ւ զիս կանչեցիր»:

Ան ըսաւ. «Ես քեզ չկանչեցի, որդեակ իմ, վերադարձիր եւ քնացիր»: Տէրը երրորդ անգամ ձայն տուաւ Սամուէլի: Ան նորէն քնաց Հեղիի մօտ, եւ ըսաւ, «Ահա հոս եմ, ինչո՞ւ զիս կանչեցիր»:

Հեղի հասկցաւ որ Տէրը կը խօսի Սամուէլի. ըսաւ անոր. «Վերադարձիր որդեակ, եւ քնացի՛ր: Եթէ ոեւէ մէկը դարձեալ քեզ կանչէ, կ'ըսես. "Խօսէ՛ Տէր, քու ծառայ կը լսէ"»:

Սամուէլ քնացաւ: Տէրը նախորդ անգամներուն նման կանչեց. «Սամուէ՛լ, Սամուէ՛լ»:

Սամուէլ ըսաւ. «Խօսէ՛ Տէր, քու ծառայ կը լսէ»:

Տէրը ըսաւ Սամուէլի. «Ահա ես Իսրայէլի մէջ այնպիսի բաներ պիտի ընեմ, որ ով որ զանոնք լսէ, պիտի ցնցուի: Այդ օր Հեղիի դէմ պիտի կատարեմ այն ամէնը՝ ինչ որ անոր որդիներուն համար ըսած եմ: Ինչպէս ըսած եմ Հեղի, անոր որդիներուն գործած անօրէնութիւններուն համար մինչեւ վերջ անոր սերունդէն վրէժ պիտի լուծեմ, որովհետեւ անոնք զԱստուած կ'անարգեն»:

Սամուէլ քնացաւ մինչեւ առաւօտ: Առաւօտուն, ան վախցաւ իր տեսիլքը Հեղիի պատմելու:

Հեղի Սամուէլին ըսաւ. «Ինչ որ Տէրը խօսեցաւ քեզի, ինձմէ մի՛ պահեր»:

Սամուէլ ամէն բան պատմեց անոր: Հեղի ըսաւ. «Աստուած այնպէ՛ս թող ընէ, ինչպէս բարի կը թուի իրեն»:

Սամուէլ մեծցաւ, Տէրը անոր հետ էր:

Ան Տէրոջ մարգարէն դարձաւ Իսրայէլի մէջ:

ԴԺԲԱԽՏՈՒԹԻՒՆ

Փղշտեցիները յարձակեցան Իսրայելի վրայ: Իսրայել անոնց դէմ պատերազմի ելաւ, եւ պարտուեցաւ: Պատերազմի դաշտին մէջ ինկան չորս հազար զինուորներ:

Իսրայելի մեծերը ըսին. «Ինչո՞ւ Տէրը այսօր մեզ պարտութեան մատնեց: Սելովէն բերենք մեր Աստուծոյ ուխտին տապանակը, որ մեր մօտ ըլլայ, եւ մեզ փրկէ մեր թշնամիներուն ձեռքէն»:

Մեծերը մարդիկ ղրկեցին Սելով, որոնք այնտեղէն բերին Աստուծոյ ուխտին տապանակը:

Հեղիի երկու որդիները՝ Ոփնի եւ Փեներէս, տապանակին հետ գացին: Երբ տապանակը բանակատեղի բերուեցաւ, ամբողջ Իսրայելի բանակը բարձրաձայն աղաղակեց: Աղաղակը լսելով, փղշտացիները ըսին. «Այս ի՞նչ բարձր աղաղակ է իսրայէլացիներու բանակին մէջ»:

Երբ փղշտացիները իմացան որ Աստուծոյ ուխտին տապանակը բերուած է, շատ վախցան, եւ ըսին. «Անոնց աստուածները բանակատեղի եկած են: Վա՛՛յ մեզի, այս զօրաւոր աստուածներուն ձեռքէն մեզ ո՞վ պիտի փրկէ: Անոնք այն աստուածներն են, որոնք Եգիպտոսը հարուածեցին»:

Փղշտացիները պատերազմեցան իսրայէլացիներու դէմ, եւ բոլոր իսրայէլացիները փախան դէպի իրենց տուները: Մեծ ջարդ տեղի ունեցաւ, եւ Աստուծոյ ուխտի տապանակը գրաւուեցաւ: Հեղիի երկու որդիները՝ Ոփնի եւ Փեներէս սպանուեցան:

Այդ օր, մարդ մը վազելով՝ բանակատեղիէն Սելով հասաւ: Հեղի նստած էր տաճարի մուտքին, եւ կը դիտէր ճամբան: Անոր սիրտը կը տագնապէր Աստուծոյ տապանակին համար: Այդ մարդը, քաղաք մտնելով, գոյժը հաղորդեց ժողովուրդին: Մարդիկ սկսան աղաղակել: Հեղի լսելով աղաղակը, հետաքրքուեցաւ պատահածով: Բանակատեղիէն եկած մարդը մօտեցաւ Հեղիի, եւ պատմեց, թէ՛ ինչպէս պատերազմին մէջ պարտուեցան իսրայէլացիները, եւ ինչպէս գրաւուեցաւ Աստուծոյ ուխտի տապանակը, եւ որ՝ Հեղիի երկու որդիները սպաննուեցան:

Հեղի, որ շատ ծերացած էր եւ մարմնով ծանրացած, երբ այս բոլոր պատահածները լսեց, ուժաթափ ինկաւ աթոռէն: Անոր ողնաշարը կոտրեցաւ եւ մահացաւ:

ՏԱՐՕՐԻՆԱԿ ՄԻՋԱԴԵՊԵՐ

Փղշտացիները, առնելով Աստուծոյ ուխտի տապանակը, զայն տարին իրենց քաղաքը, եւ դրին Դագոնն աստուծոյ տաճարին մէջ, Դագոնի արձանին դիմաց: Յաջորդ օր, մարդիկ տաճար մտան: Անոնք տեսան որ Դագոնի արձանը երեսին վրայ ինկած է գետին՝ տապանակին առջեւ: Զայն ետ իր տեղը դրին: Յաջորդ օր նոյնը պատահած էր, եւ արձանին գլուխը եւ ձեռքերուն երկու թաթերը կոտրած էին:

Տէրը խոշոր ուռեցքներով ծածկեց Ազովտոսի բնակիչներուն մարմինները: Անոնք տեսան որ իրենց դժբախտութիւններուն պատճառը Աստուծոյ ուխտի տապանակն է, եւ որոշեցին զայն փոխադրել Գէթ քաղաքը: Երբ տապանակը Գէթ տարին, այնտեղ համաճարակ ինկաւ: Անոնք տապանակը այնտեղէն Ակկարոն ղրկեցին: Ակկարոնացիները վախցան, եւ դիմելով նախարարներուն,

ըսին. «Արտօնեցէք որ Իսրայէլի Աստուծոյ ուխտի տապանակը իր տեղը վերադառնայ»: Այդպէս ալ եղաւ:

Փղշտացիները նոր սալ մը պատրաստեցին, եւ երկու կաթնոու երինջներ լծեցին սալին: Աստուծոյ ուխտին տապանակը, ուրիշ ոսկիէ նուէրներու հետ սալին վրայ դրին: Երինջները յառաջ տարին սալը, առանց ուղեկցողի:

Փղշտացիները ըսին. «Եթէ երինջները Իսրայէլի սահմանին ուղղութեամբ երթան, ուրեմն այս մեծ դժբախտութիւնները մեզի հասցնողը անոնց Աստուածն էր»: Երինջները ուղիղ գացին դէպի Իսրայէլի սահմանը:

ՄԵՆՔ ԹԱԳԱԻՈՐ ԿՈՒՋԵՆՔ

Սամուէլ ըսաւ. «Բոլոր իսրայէլացիները թող հաւաքուին Մասփայի մէջ: Ես անոնց համար պիտի աղօթեմ Տէրոջ»: Իսրայէլացիները հաւաքուեցան Մասփայի մէջ:

Երբ փղշտացիները լսեցին որ իսրայէլացիները Մասփա հաւաքուած են, իրենց բանակները հոն ղրկեցին, որպէսզի յարձակին անոնց վրայ: Իսրայէլացիները ըսին Սամուէլի. «Քու Տէր Աստուծոյ՝ մեզի համար աղօթելէ մի՛ դադրիր, որպէսզի ան փղշտացիներուն ձեռքէն մեզ փրկէ»:

Սամուէլ իսրայէլացիներուն համար Տէրոջ աղօթեց, եւ գառնուկ մը զոհեց անոր:

Սամուէլ դեռ չէր վերջացուցած զոհաբերութիւնը, երբ փղշտացիները յարձակեցան: Տէրը Սամուէլին աղօթքը լսեց, եւ փղշտացիները հարուածեց կայծակներով: Անոնք ահաբեկած՝

փախան: Իսրայէլացիները հալածեցին եւ սպանեցին անոնց բոլոր զինուորները:

Երբ Սամուէլ ծերացաւ, իր որդիները Իսրայէլի վրայ դատաւոր նշանակեց: Անոնք իրենց հօրը նման ուղղամիտ չէին. անոնք կաշառակեր մարդիկ էին: Իսրայէլի մեծերը հաւաքուեցան, Սամուէլի մօտ եկան, եւ ըսին. «Դու՛ն ծերացած ես, իսկ քու որդիներդ քեզի նման ուղղամիտ չեն: Մեզի համար թագաւոր մը դիր, այնպէս ինչպէս մեր շուրջը ապրող ազգերը ունին»: Սամուէլ աղօթեց Տէրոջ, եւ Տէրը ըսաւ անոր. «Լսէ՛ ժողովուրդին ձայնը, եւ տես թէ ան ի՛նչ կ'ըսէ քեզի: Դու՛ն անոնց բացատրէ թագաւորին իրաւունքները»: Սամուէլ ըսաւ ժողովուրդին. «Դուք թագաւոր կ'ուզէք, բայց գիտցէ՛ք որ ձեր տղաները անոր ծառները պիտի դարձնէք, իսկ աղջիկները՝ աղախիկները, ձեր ընտիր դաշտերը ան պիտի առնէ, եւ իր ծառաներուն պիտի տայ»:

Այս բոլորը իմանալէ ետք ալ, Իսրայէլի ժողովուրդը, իր շրջապատի ազգերուն նման, կը փափաքէր թագաւոր ունենալ:

Սամուէլ լսեց ժողովուրդին բոլոր ըսածները, եւ զանոնք Տէրոջ յայտնեց: Տէրը ըսաւ անոր. «Լսէ՛ զանոնք եւ թագաւոր մը նշանակէ»:

† † † † †

Բառարան

Սամուէլ : հռչակաւոր մարգարէ եւ դատաւոր: Ի ծնէ եղած է Ղեւտացի, փոքր տարիքէն կը նուիրուի տաճարի եւ կը յանձնուի Հեղիի դաստիարակութեան, որու մահէն ետք կը նշանակուի Իսրայէլի դատաւոր: Ան եղած է հրեաներու վերջին եւ լաւագոյն դատաւորը:

Սամուէլ ազատեց հրեաները ամէն օտար լուծէ, դատաւորութիւն ըրաւ ճշդիւ եւ անաշտ, յառաջ տարաւ դաստիարակութիւնը եւ ճշմարիտ կրօնքը, միացուց ցեղեր եւ զանոնք հասցուց բարձր աստիճանի քաղաքակրթութեան: Երբ հրեաները խնդրեցին Սամուէլէն թագաւոր մը, ան օծեց Սաւուղ Առաջին թագաւորը Իսրայէլի: Իր կեանքի ընթացքին Սամուէլ վարեց վերին եւ բարերար ազդեցութիւն մը Իսրայէլի մէջ: Ան մահացաւ 1058-ին նախքան Քրիստոս, 98 տարեկանին:

Հեղի : Քահանայապետ Հրեաներու Իթամարայ ցեղէն: Ան քառասուն տարի դատաւորած է Իսրայէլի, անուանի էր բարեպաշտութեամբ եւ վաստակով, բայց մեղադրելի իր անհոգութեան համար հանդէպ իր զաւակներու կրթութեան: Այս պատճառաւ Աստուծոյ պատուհասը եկաւ անոր տան վրայ:

Փղշտացիք: Կը բնակէին Քանանիոյ հարաւային ծովեզերքը, (Պաղեստին): Փղշտացիք Գաղթած են Եգիպտոսէն եւ հաստատուած Կապարովկիա եւ Պաղեստին: Աբրահամի ժամանակէն Փղշտացիք հզօր ժողովուրդ էին. անոնք ունէին անուանի թագաւորներ: Անոնց տէրութիւնը կը բաժնուէր հինգ փոքր իշխանութիւններու՝ ինչպէս Գազա, Ասկազոն, Ազովտոս, Գէթ եւ Ակկարոն, որոնց իւրաքանչիւրը ունէր առանձին իշխան: Անոնք յաճախ պատերազմած են հրեաներու դէմ, յաղթած եւ տուած անհամար զոհեր: Փղշտացիք մնացին ազատ մինչեւ Դաւիթ նուաճեց զանոնք. այնուհետեւ Փղշտացիք մնացին հպատակ Յուդայի թագաւորութեան: Պատմութեան ընթացքին կը տեսնենք, թէ Փղշտացիք Իսրայէլի մէջ շատ աղետներ գործեցին, որոնց համար Աստուած կը սպառնայ պատժել զանոնք խստիւ: Կը կարծուի թէ Փղշտացիներու անկումը եղած է Նաբուգոդոնոսորի շրջանին:

Սելով : Այս բառը գործածուած է ցցնելու համար Մեսիան, որուն գալուստը կը նախաձայնէ Յակոբ սա բառերով՝ «Իշխանութիւնը Յուդայէն պիտի չպակսի, ոչ ալ անոր ոտքերուն մէջտեղէն օրէնսդիրը, մինչեւ որ Սելով գայ, ու ժողովուրդը անոր պիտի հնազանդի.»» այսինքն մինչեւ Քրիստոսի ժամանակը Յուդայի առանձին կառավարութիւնը, իբրեւ ցեղ, պիտի չդադրի:

Ընտրուած աղօթքներ մանուկներու համար

Կերակուրներէ առաջ

Խաղաղութեամբ վայելենք այս կերակուրը, որ Տէրը պատրաստած է մեզի համար: Օրհնեալ ըլլայ Տէրը իր պարգեւներուն համար: Ամէն:

Կերակուրներէն ետք

Այս սեղանին վրայ լիութիւնը անսպառ եւ անպակաս ընէ Քրիստոս, մեր Աստուածը, որ մեզ կերակրեց եւ կշտացուց: Յաւիտեան փառք Իրեն: Ամէն:

Օգնութեան խնդրանք

Տէր, երես մի՛ դարձներ ինձմէ. բարերար Տէր, կ'աղաչեմ, ինծի օգնական եղիր: Տէր, զիս մի՛ անտեսեր եւ մի՛ լքեր զիս, ով իմ փրկիչ Աստուածս:

Օրական աղօթք պատանիներու

Տէր Աստուած իմ, հզօր եւ գթած, դուն՝ որ քու անսահման սիրովդ զիս ոչինչէն ստեղծեցիր քու անիմանալի պատկերովդ, եւ բարի պարգեւներովդ կը հոգաս իմ բոլոր պէտքերս. ամբողջ սրտով շնորհակալութիւն կը յայտնեմ քեզի՝ ամէն բանի համար, որ տուիր ինծի ծննդեանս օրէն մինչեւ այսօր: Բայց որովհետեւ մարդկային յանցանքներուն բերումով՝ ապականած, տկար եւ սխալական բնութիւն մը ունիմ, կ'աղաչեմ, ինծի քու շնորհքդ եւ իմաստութի՛ւնդ տուր, եւ

քու զօրութիւնդ օգնական դարձուր ինծի, որպէսզի կարենամ միշտ քու պատուիրաններուդ փրկարար շաւիղներուն մէջ քալել եւ համակերպիմ քու կամքիդ եւ Օրէնքիդ, որպէսզի զերծ մնամ հոգիի եւ մարմնի բոլոր վտագներէն ու փորձանքներէն, հեռու մնամ բոլոր անմիտ սխալներէն, յամառութեան մոլութենէն, անկարգ ցանկութիւններէն եւ սեփական քմահաճոյքներէ:


Դրոշմէ՛ հոգիիս մէջ՝ քու երկիւղդ, որպէսզի մաքրութեամբ եւ արդարութեամբ ապրիմ, միշտ քե՛զ ունենալով մտքիս մէջ: Իմ կամքս յօժար դարձուր բարիին եւ քու կամքիդ՝ դո՛ւն ուղղէ իմ խօսքերս, որպէսզի միշտ վայելուչը ընտրեմ: Իմ տկար անձս մի՛ մատներ այս աշխարհի փորձանքներուն ու տագնապներուն, որպէսզի չըլլա՛յ որ շեղիմ քու խօսքէդ եւ բարի շաւիղէն:

Ճամբորդութենէ կամ քնանալէ առաջ


Դուն՝ որ բոլորին պահապանն ես, Քրիստոս, քու աջդ թող հովանի՛ ըլլայ վրաս՝ գիշեր ու ցերեկ, տան մէջ նստած թէ ճամբան գացած ատենս, քնացած թէ արթնցած ատենս, որպէսզի երբե՛ք չսասանիմ: Եւ ողորմէ՛ քու արարծներուդ եւ ինծի՛ մեղքերու մէջ կորսուածիս:

Կրօնական հանելուկներ


Մենք ունեինք մեհեաններ
Քուրմեր, կուրքեր, բագիններ
Կը պաշտէինք շաստուածներ:
Ո՞վ էինք մենք:




Տասըերեք տարի ան
Խոր Վիրապին մէջ մնաց
Եւ բժշեց Հայոց արքան:
Ո՞վ է ան:




Փրկչին կրօնը ան հոշակեց
Հայաստանի պետական կրօնը
Եւ կոչուեցանք մենք Քրիստոնեայ:
Ո՞վ է ան:




Կիրակի օր անպայման
Եկեղեցին հայկական
Երգերով եւ աղօթքներով
Ի՞նչ կը մատուցանէ:




Մեր հոգեւոր կեդրոնին մէջ
Կ'օրհնեն իւր մը շատ անգին
Որ ամէն հայ կնքուի:
Ի՞նչ իւր է ան:



Մուրճը ձեռքին իջաւ վար
Եւ ցոյց տուաւ մեզի վայր
Ծինելու մեր սրբավայր:
Ո՞վ էր ան:



Կրօնական խաչբառ



- | | | | |
|---|-------------------|----|----------------------------------|
| 1 | Հրահանգ | 9 | Թիցել |
| 2 | Առաջին | 10 | Օրէնք |
| 3 | Մէկ հատիկ ծնած | 11 | Եկեղեցւոյ բարձրագոյն հովուապետ |
| 4 | Կոթող | 12 | Հայաստան եկած երկրորդ լուսաւորիչ |
| 5 | Ցած գալ | 13 | Ծնող կին |
| 6 | Աղօթատեղի | 14 | Միտք մը տարածել |
| 7 | Աստուածային | 15 | Խաչբարի շինութեան նիւթ |
| 8 | Հեթանոսական տաճար | | |

Այբուբենն ու բանալի բառեր

Ա	Աշխէն թագունի
Բ	Բարթողիմէոս
Գ	Գրիգոր Լուսաւորիչ
Դ	Դոնբացէք
Ե	Եկեղեցի
Զ	Զանգակատուն
Է	Էջմիածին
Ը	Ընդունիլ
Թ	Թովմաս առաքեալ
Ճ	Ճամերգութիւն
Ի	Իմաստութիւն
Լ	Լոյս
Խ	Խոսրովիդուխտ
Ծ	Ծաղկազարդ
Կ	Կիրակնօրեայ դպրոց
Հ	Հոգեւոր
Ձ	Ձեռնադրել
Ղ	Ղուկաս
Ճ	Ճշմարտութիւն
Մ	Մայր աթոռ
Յ	Յարութիւն
Ն	Նարեկ
Շ	Շարական
Ո	Որդի
Չ	Չարչարել
Պ	Պատարագ
Ջ	Ջրօրհնէք
Ռ	Ռահան
Ս	Սաղմոս
Վ	Վեհափառ
Տ	Տաճար
Ր	Րենական «Աստուածային»
Յ	Յնծութիւն
Ի	Ուխտավայր
Փ	Փառք
Ք	Քրիստոս
Օ	Օձել
Ֆ	Տուֆ

Դուք ալ քու կարգիդ, իւրաքանչիւր գիրով գտի՛ր քրիստոնէութեան, հայ եկեղեցւոյ վերաբերող բառ մը:

Ամառնային Կիրակնօրեայ ծնողք-աշակերտ ժամ

Այս ամառ կրնաս ըլլալ բախտաւոր աշակերտ մը:

Իւրաքանչիւր շաբաթ, կարդա՛ առաջարկուած Աւետարանի հատուածը ու պատասխանէ՛ անոր վերաբերող հարցումներուն: Ապա պատասխանդ մեզի ուղարկէ յիշուած ժամկէտէն առաջ գետեղելով **Կիրակնօրեայ Դպրոցին** **Նամակատուիին մէջ** «Սուրբ Յակոբ Եկեղեցույ կից Հայ Կեդրոնին մէջ»:

Բոլոր անոնք որոնք կը ներկայացնեն ճիշդ պատասխանները պիտի ստանան նուէրներ...

Անուն
Կարգ
Թուական
Հեռաձայն

Ծաբաթ առաջին՝ ժամկետ Յունիս 16 Կէսօր

ՆՇԱՆ ՄԸ
Մատթէոս 12. 38-45

- Օրէնքի ուսուցիչներէն եւ փարիսէցիներէն ոմանք ի՞նչ խնդրեցին Յիսուսէն:

- Յիսուս ի՞նչ օրինակ տուաւ անոնց:

- Յիսուս ինչպէ՞ս բացատրեց մարդոց չար կամ գէշ ըլլալու պարագան:

Անուն
Կարգ
Թուական
Հեռաձայն

Շաբաթ երկրորդ՝ ժամկետ Յունիս 23 Կեսօր

ԵՐԿՆՔԻ ԹԱԳԱԽՈՐՈՒԹԻՒՆԸ
Մատթեոս 13. 24-30

➤ Յիսուս ո՞ր առակը պատմեց իր աշակերտներուն:

➤ Ըստ առակին ո՞վ կամ ի՞նչ կը ներկայացնեն հետեւեալներէն
իրաքանջիրը:

Մարդը -----

Սերմը-----

Արտը-----

Թշնամին -----

Որոմը -----

Ծառաները կամ հնձուորները -----

Հունձքի ժամանակը -----

➤ Իսկ դու, ըստ քեզի, ո՞ր խումբին մէջ կը դասուիս. ինչո՞ւ:

Անուն
Կարգ
Թուական
Հեռաձայն

Շաբաթ երրորդ՝ ժամկետ Յունիս 30 Կէսօր
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀՐԱԾՔ ՄԸ
Մատթէոս 14.13-21

➤ Ո՞րն է Յիսուսի այն հրաշքը որ իր թիւերով յաճախ կը շփոթուի:

➤ Ո՞ր դէպքէն ետք Յիսուս նաւակով մեկնեցաւ:

➤ Աշակերտները ինչո՞ւ Յիսուսի առաջարկեցին որ արձակէ
ժողովուրդը:

➤ Այս պատմուածքին ո՞ր մասն է որ մենք յաճախ կը կատարենք
եւ կամ անհրաժեշտ է որ կատարենք

Անուն
Կարգ
Թուական
Հեռաձայն

Ծաբաթ չորրորդ՝ ժամկետ Յուլիս 7 Կեսօր

ԿԵՆԴՐԱՆԻ ԱՍՏՈՒԾՈՅ ՈՐԴԻՆ

Մատթէնս 16.13-17.13

- Ի՞նչ էր մարդոց կարծիքը Յիսուսի ինքնութեան մասին. ո՞վ էր Ան:

- Պետրոս ի՞նչ պատասխանեց երբ Յիսուս ուզեց գիտնալ աշակերտներուն կարծիքը:

- Յիսուս ինչո՞ւ երանի տուաւ Պետրոսի:

- Յիսուս ո՞ր աշակերտներուն հետ լեռ բարձրացաւ:

- Ի՞նչ պատահեցաւ Յիսուսի:

Անուն
Կարգ
Թուական
Հեռաձայն

Ծաբաթ հինգերորդ՝ ժամկետ Յուլիս 14 Կեսօր
ԱՍՏՈՒԾՈՅ ՍԷՐԸ
Յովհաննու 3.13-21

Աստուած որչա՞փ սիրեց աշխարհը:

Աստուած ինչո՞ւ իր միածին Որդին աշխարհ ղրկեց:

19-րդ համարին մէջ ո՞վ էր լոյսը եւ որո՞նք խաւարը լոյսէն աւելի
սիրեցին:

Լոյսը

-

խաւարը սիրողները

Այսօրուան ճաշու աւետարանէն նշէ՛ երեք գործնական բաներ որոնք
կրնաս գործադրել քու առօրեայ կեանքիդ մէջ:

Անուն
Կարգ
Թուական
Հեռաձայն

Շաբաթ վեցերորդ՝ ժամկետ Յուլիս 21 ԿԷՍՈՐ

ԲԱՐԵԿԵՆԴԱՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Մարկոս 2.1-12

Մարկոսի Աւետարանը չորս աւետարաններէն ամենէն կարճն է եւ բոլորէն առաջ գրուած: Մարկոս աւետարանիչը Յիսուսի 12 աշակերտներէն մէկը չէր, այլ ընկերակցած էր Պօղոսի Երուսաղէմէն Կիպրոս կատարած ճամբորդութեան: Շրջան մըն ալ աշակերտած էր նաեւ Պետրոս առաքեալին:

Ո՞ր քաղաքին մէջ Յիսուս այս հրաշքը գործեց:

Յիսուս որո՞նց հաւատքը տեսնելով ըսաւ. «Որդեակ իմ, մեղքերդ ներուած ըլլան քեզի»:

Ո՞վ է «Մարդու Որդին»:

Քու կեանքիդ մէջ ի՞նչ ձեռով կը տեսնուի քու հաւատքդ:

Անուն
Կարգ
Թուական
Հեռաձայն

Շաբաթ եօթներորդ՝ ժամկետ Յուլիս 28 Կէսօր

ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Ղուկաս յոյն բժիշկ մըն էր, որ աշակերտած էր Պօղոս առաքեալի:
Յատկանշական է որ առակներէն միայն Ղուկասու Աւետարանին մէջ
յիշուած են «Բարի Սամարացին», «Անառակ Որդին», եւայլն:
Կարդա՛ Ղուկասու Աւետարանը եւ պատասխանէ՛:

Հռոմի ո՞ր կայսրի օրով Յիսուս ծնաւ:

Յովսէփ ո՞ր քաղաքին մէջ կ'ապրէր երբ մարդահամարի հրովարտակը
ելաւ:

Յովսէփ ո՞ր քաղաքը ստիպուեցաւ երթալ անունը արձանագրելու
համար եւ ինչո՞ւ:

Յիսուս ինչո՞ւ մտորի մէջ ծնաւ:

Ի՞նչ ձեւով յատկանշական է այս ծնունդը:

Անուն
Կարգ
Թուական
Հեռաձայն

Շաբաթ ութերորդ՝ ժամկետ Օգոստոս 4 Կէսօր

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԾԱՌԱՆԵՐ

Հոռմ. 6.12-23

« Լաւ գիտցէք թէ որու ծառայութեան որ նուիրուիք եւ հնազանդիք՝
անոր ծառան եղա՞ծ կ'ըլլաք: Մեղքին ծառայելով մահուան
կ'ենթարկուիք, մինչ Աստուծոյ ծառայելով կ'արդարանաք:»

Հոռմ. 6.16

Որո՞ւ կ'ուզես ծառայել, մեղքին թէ՞ Աստուծոյ:

Յիշէ՛ երեք արարքներ, որոնցմով կը ծառայես Աստուծոյ:

Ընդօրինակէ՛ Հոռմ. 6.23

Որովհետեւ մեղքին

Անուն
Կարգ
Թուական
Հեռաձայն

Ծաբաթ իններորդ՝ ժամկետ Օգոստոս 11 Կէսօր

ՔՈՅՐ ԵՒ ԵՂԲԱՅՐ ՅԻՍՈՒՍԻ

Մատթէնս 12. 46-50

« Ո՛վ որ երկնաւոր հօրս կամքը կատարէ՛ անիկա է եղբայրս, քոյրս եւ մայրս:»

Մատթ. 12.50

Ինչպէ՛ս կրնանք Յիսուսի քոյրը կամ եղբայրը ըլլալ:

Ինչպէ՛ս կրնանք Աստուծոյ կամքը կատարել:

Ըստ կարդացածիդ, Յիսուս որո՞նց ընդունեց որպէս իր մայրը, քոյրը եւ եղբայրը:

Անուն
Կարգ
Թուական
Հեռաձայն

Շաբաթ տասերորդ՝ ժամկետ Օգոստոս 18 ԿԷՍՈՐ

Շարէ՛ պատմական ժամանակագրութեամբ:

- Յիսուսի ծնունդը:
- Մարիամի կատարած այցելութիւնը Եղիսաբեթին:
- Քառասուն օր անց Յիսուսի ներկայացումը տաճարին մէջ:
- Փախուստ դէպի Եգիպտոս:
- Յիսուս տասներկու տարեկան:
- Աւետումը Յիսուսի ծնունդին:
- Կանայի հարսանիքը:
- Խաչելութեան պահուն, Յիսուս իր մայրը յանձնեց Յովհաննէս առաքելի խնամքին:
- Վերադարձ դէպի Նազարէթ:

Անուն
Կարգ
Թուական
Հեռաձայն

Շաբաթ տասներմեկերորդ՝ ժամկետ Օգոստոս 25 ԿԷսօր

ԵԿԵՂԵՑԻՆ

Տաճար	Սուրբ գիրք
Գաւիթ	Եկեղեցւոյ զանգակը զետեղուած մասը
Գմբէթ	Խունկը միալու յատուկ աման
Զանգակատուն	Եկեղեցի, աղօթատեղի
Բուրվառ	Եկեղեցական երգ
Շարական	Պատարագի բաժակ
Գրակալ	Եկեղեցւոյ մուտքի մասը
Դպիր	Գիրք դնելու ծառայող բարձր սեղան
Սկիհ	Եկեղեցւոյ կլոր գագաթը
Աւետարան	Եկեղեցւոյ մէջ շարական երգող